ԱՐՈՒՃԻ VII Դ. ՏԱՃԱՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԾԱՆՄԱՆ ԱՌԹԻՎ

Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ

Միջնադարյան հայ վիմագրության ուսումնասիրությունը հասել է զարգացման այնպիսի աստիճանի, որ ցարդ հավաքված հազարավոր արձանագրությունների (հրապարակված ու չհրապարակված) գրչության և հնագրության մեջ ընձեռած տվյալներով միանգամայն հնարավոր է ստույգ որոշել «կասկածելի» թվացող մի շարք արձանագրությունների ժամանակագրությունը։ Այդպիսի «կասկածելի» արձանագրություններից է Արուճի VII դարի հայտնի տաճարի շինարարական հիշատակագրությունը։

Արուճի հռչակավոր տաճարի արևելյան պատին, գետնից ոչ շատ բարձր, հատուկ շրջանակի մեջ, միակտոր քարի վրա փորագրված է հուշարձանի կառուցմանը վերաբերող 8 տողանոց երկաթագիր մի արձանագրություն։ Այն մեզ է հասել միանգամայն լավ վիճակում, ընթերցվում ու վերծանվում է դյուրությամբ և բազմիցս հրատարակվել է[1]։ Չնայած դրան նկատելի է փոքրիկ, բայց էական մի բացթողում։ Ահա այն՝ վաստակաշատ ու հմուտ գիտնական Գ. Հովսեփյանի վերծանմամբ և մեր լրացմամբ.

«Ի, Եւ(Թ)։ ԱՄԻ ԿՈՍՏԱՆՏՆԻ ՄԱՐԵ-
ՐԻ ԱՄՍՈՑ, ՈՐ ԱՒ[Ր]Ժ ԵՒ ՀԻՄՆ-
ԱՐԿԵՑԱՒ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ
Ի ՁԵՌՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՄԻԿՈՆԵՆԻ
ՀԱՅԻՈՑ ԻՇԽԱՆԻ ԵՒ ՀԵՂԻՆԷ-
Ի ՆՈՐԻՆ ՁՈՒԳԱԿՑԻ,
Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ՇԻՆԱՒ-
ՂԱՑ ՁՍԱ»[2]։

Արձանագրությունն իր գրչությամբ, հնագրությամբ և նույնիսկ լեզվական առանձնահատկություններով միանգամայն համապատասխանում է VII դ. ոճին։ Այդ է ապացուցում նրա մանրազնին համեմատությունը VII դ. հայերեն բազմաթիվ այլ վիմագրական նմուշների հետ[3]։

Արձանագրության քարի ֆակտուրան, տեսակն ու տեղական նարնջագույն երանգը, մանավանդ, նրա մշակումն այնքան ներդաշնակ են հուշարձանի պատի շարված մյուս քարերին, որ տարակույս անգամ լինել չի կարող, որ այն ժամանակակից է շենքին։ Այս և պատի մյուս քարերի եզրակոսները, վերին աստիճանի նուրբ ու միաժամանակյա միացումներն այդ տեսակետի լավագույն հաստատումն են։

Ուսումնասիրողների մեծագույն մասը՝ Մ. Տեր-Մովսիսյանը, Մ. Տեր-Մկրտչյանը, Գ. Հովսեփյանը, Ղ. Ալիշանը, Ի. Ստրժիգովսկին, Վ. Հարությունյանը, Ն. Տոկարևին, Ստ. Մնացականյանը, Գ. Զուբինաշվիլին, ինչպես նաև Կ. Ղաֆադարյանը, Ս. Բարխուդարյանը իրավացի կերպով գտնում են, որ Արուճի թե՛ արձանագրությունը և թե՛ նրա քարը տաճարի օրգանական մասն են կազմում և ժամանակակից են հուշարձանին։

---

[1] И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 402, 421—2. *Հեղինակներից ոչ մեկը չի նկատել, որ արձանագրության առաջին տողի «Թ» թվանշանը երկու գծիկի մեջ է առնված։*

[2] Գ. Հովսեփյան, Քարտեզ հայ հնագրության, «Շողակաթ», հայագիտական ժողովածու, գիրք առաջին, Վաղարշապատ, 1913, էջ 117։ *Հեղինակը մոռացել է նշել արձանագրության թվական արտահայտող տառերի վերևում և ներքևում եղած պատիվները, թեև իր իսկ «հրատարակած լուսանկարում դրանք պարզորոշ երևում են։ «Հայիոց» բառի «ի»-ն հեղինակը դարձրել է «ւ», որը բացահայտ վրիպում է, ինչպես նկատել է Հ. Օրբելին (տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 421)։*

[3] *Տառերի համեմատությունը տե՛ս էջ 80։*



Ակադեմիկոս Հ. Օրբելին, չտարակուսելով անգամ տաճարի շինության ժամանակի և այն կառուցող Գրիգոր Մամիկոնյանի անձնավորության VII դ. պատկանելու մասին, այնուամենայնիվ արձանագրության գրության ժամանակի կապակցությամբ հայտնում է մի շարք կասկածներ, որոնք իրեն դրդել են Արուճի տաճարի շինարարական արձանագրության ժամանակը համարել XI դ.։ Նա գրել է.

1. «Արձանագրությունը չէր կարող թվագրված լինել Կոնստանտ-Կոնստանտինի իշխանության 29-րդ տարում, քանի որ նա Հերակլի որդի Կոնստանտինի մահից հետո սպանվեց իր իշխանության 27-րդ տարում»[4]։

2. «Հայիոց»-ում իհարկե ոչ մի բարբառայնություն չունենք։ Ակնհայտ այդ սխալ փորագրությունն առաջացել է հավանաբար այն բանի հետևանքով, որ արձանագրության գրիչը, անորոշ դեմքով փորագրելով «հայ» բառը, այնուհետև սկսել է փորագրել «իշխան» բառը, բայց հետո շտկել է իր սխալը՝ չփորագրելով դրան կից սխալ արտահայտված տառերը։ Եթե այդ այդպես է, ապա «հայ իշխան» ձևի ամենահավանական արտահայտությունը ցույց է տալիս գրչի կողմից այդ տիտղոսի նշանակության անհասկանալիությունը, հետևաբար արձանագրությունն էլ ուշ շրջանի գործ է»[5]։

3. «Մյուս անճշտությունը կայանում է թիվ արտահայտող 4 տառերի վերևում և ներքևում դրվող համապատասխան պատիվների բացակայությամբ։ Այս մանրությունը շատ կարևոր է այնքանով, որքանով փաստաթղթում հարաբերականորեն, թեև սխալ, թվերը մինչև VII դ. հատուկ հետաքրքրություն են ներկայացնում, հատկապես հուշարձանի թվագրության համար»[6]։

4. «Բոլոր դեպքերում արձանագրությունը արտաքնապես վստահորեն կարելի է վերագրել մինչև XI դ.»[7]։

Հուշարձանների կառուցման արձանագրությունների արտագրությունների իսկական փաստեր ունենք Մաքենյաց վանքում, Հացառատում, Մարմաշենում և այլուր, որտեղ կոնկրետ կերպով նշված են երբեմն դրանց արտագրության նույնիսկ ժամանակը։ Ինքնին հասկանալի է, որ նման արտագրված արձանագրություններն էլ գրչությամբ ու հնագրությամբ միանգամայն հարիր են իրենց ժամանակի ոգուն։ Նշենք թեկուզ Հացառատի IX դ. կենտրոնագմբեթ հայտնի հուշարձանի

---

[4] И. А. Орбели, Избранные труды, стр. 402.
[5] Նույն տեղում, էջ 421։
[6] Նույն տեղում, էջ 421։
[7] Նույն տեղում, էջ 423։

կառուցման արձանագրության օրինակը, որն ավարտվում է՝ «Իսկականից արտագրվեցաւ 1895 թ.»[8] տողով։

Անդրադառնանք Հ. Օրբելու հիշյալ նկատառումներին։

1. Հնագրության հարցում չի կարելի համաձայնվել հարգելի գիտնականի հետ, քանի որ արձանագրությունում փորագրված Հ, Կ, Է, Խ, Շ, Ը, Ա, Զ, Ն, Ց, Ջ, Ց և մի շարք այլ տառերի համեմատությունը Տեկորի, Օձունի, Զովունիի, Պտղնիի, Հռիփսիմեի, Բագավանի, Վ. Թալինի, Մաստարայի և ուրիշ հնագույն տաճարների V—VII դարերի արձանագրությունների հետ ակնբախ վկայում են այն մասին, որ Արուճի տաճարի հիշյալ արձանագրությունը թե՛ իր գրչությամբ և թե՛ հնագրությամբ միանգամայն համապատասխանում է այդ դարերի հայերեն տառաձևերի ոճին։ (Ստորև, ներկայացնում ենք V—VII դդ. հայերեն հնագույն տառաձևերի ժամանակագրական մի փոքր ցուցակ, տես տախտակը)։

Տեկոր V դար	Զովունի V=VI դար	Օձուն V—VI դարեր	Երուսաղեմ VI—դար	Պտղնի V—VII դարեր	Հռիփսիմե 618 թ.	Բագավան 639 թ.	Սիսիան VII դար I	Մաստարա VII դար	Անձավ VII դար	Արուճ 605/618 թթ.	Վ. Թալին 783 թ.	Աղթամար 921—929 թ.	Նոյեմբեր 991 թ.
Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե		Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	
Զ	Զ		Զ		Զ	Զ			Զ			Զ	
Թ	Թ		Թ		Թ	Թ		Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ
Գ									Գ	Գ		Գ	Գ
Ի	Ի	Ի	Ի		Ի			Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի
Խ			Խ						Խ	Խ	Խ	Խ	Խ
Կ		Կ	Կ		Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Հ			Հ		Հ	Հ	Հ	Հ	Հ	Հ	Հ	Հ	Հ
Մ			Մ	Մ	Մ	Մ			Մ	Մ	Մ	Մ	
Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
Շ	Շ		Շ		Շ			Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Մ	Մ		Մ	Մ	Մ	Մ			Մ	Մ	Մ		
Ց	Ց		Ց	Ց	Ց	Ց	Ց	Ց	Ց	Ց	Ց	Ց	Ց

8 Ս. Խ. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 22։

Այդ են վկայում նաև պրոֆ. Կ. Ղաֆադարյանի կազմած հայկական տառերի հնագրության հանրածանոթ աղյուսակի տվյալները[9]։

Անդամ ուղղագրական և արտահայտչական մի շարք բառաձևեր՝ ինչպիսիք են «Հիմնարկեցաւ», «Շինաւդ», «Մամիկոնենի» և այլն, ձայնակցում են Տեկորի, Հռիփսիմեի, Նախիջևանի V—VII դդ. վիմական արձանագրություններում տեղ գտած համանման բառաձևերին և արտահայտություններին[10]։ «Զուգակցի» գրելաձևում հանդիպող ավելորդ ը-ն վերակոչված է Ցոլունիի V—VII դդ. և Մաստարայի VII դ. արձանագրություններում՝ Գրքունեաց, Գրնունեաց ձևով։

Արուճի տաճարի շինարարական արձանագրության VII դ. պատկանելու հնագիտական կարևոր հատկանիշներից մեկն էլ կապդրերի իսպառ բացակայությունն է նրանում։ Նրա առաջին երկու տողերում միայն կան թվանշան արտահայտող չորս տառեր, որոնք ճիշտ կերպով նշված են պատիվներով։ Տվյալ դեպքում այս երևույթը արձանագրության թվագրության տեսակետից խիստ կարևոր է, որովհետև IX—XI դդ. արդեն կապդրերն ու հապավումները գրեթե միշտ, որպես կանոն, առկա են վիմական արձանագրություններում։ Այս առումով չի կարելի համաձայնվել Գ. Ն. Զուբինաշվիլու այն կարծիքին, թե արձանագրության 2—3-րդ տողերում նշված «հիմնարկեցաւ» բառն իրր անհարիր է VII դ. ոճին և դրա փոխարեն առաջարկում է «շինեա»[11], թեև այդ դեպքում այն պետք է գրվեր ոչ թե «շինեա», այլ «շինեցաւ», քանի որ «հիմնարկեցաւ»-ն իր այդ տեղում օգտագործված է ճիշտ՝ բայի կրավորական կերպի անցյալ կատարյալ ժամանակի, եզակի երրորդ դեմքով։ Սակայն դա հիմք չի տալիս արձանագրությունն ամբողջությամբ VII դ. այս կողմ բերելու։ Բոլորովին էլ պատահական չէ, որ Հ. Օրբելին այդ հարցին չի անդրադառնում։

Այսպես, օրինակ, Տեկորի տաճարի V դ. շինարարական արձանագրության մեջ նույնպես օգտագործված է «հիմնարկեցաւ», Բագավանի ս. Հովհաննես եկեղեցու 639 թվակիր արձանագրության մեջ «հիմնարկի»[12], Բագարանի տաճարի 631 թ. արձանագրության մեջ՝ «ձգեաց հիմունս»[13], «Այամնի» ս. Անանիա եկեղեցու արձանագրության մեջ՝ «շինեցաք»[14] (շինել բայից), իսկ Մրենի տաճարի 639—640 թ. արձանագրության մեջ՝ «շինեցաւ»[15] և այլն։

Սակայն, ի տարբերության Բագավանի և Բագարանի վերոհիշյալ արձանագրությունների՝ Արուճի արձանագրության մեջ նշված «հիմնարկեցաւ»-ը պետք է հասկանալ ոչ միայն հիմքը դրվելու «հուշարձանը հիմնադրելու, այլ տաճարի կառուցումն ավարտելու իմաստով»[16], այլապես անհասկանալի կդառնար նրանում հիշատակված շինարարության տարին, ամիսն ու ամսաթիվը, առանց նշելու նրա ավարտը։ Բագարանի 631 և Բագավանի 639 թվակիր շինարարական արձանագրություններում, հուշարձանների հիմնադրման թվարկության հիշատակման հետ մեկտեղ, նշված են նաև նրանց ավարտի թվականները[17]։ Եվ դա հասկանալի է։ Ուստի կարծում ենք, որ Արուճի տաճարի արձանագրության մեջ հիշատակված տարեթիվն, ամիսն ու ամսաթիվը ճիշտ կլինի վերագրել տաճարի շինարարության ավարտին ու թերևս նաև նրա օծմանը։

2. Արձանագրության թվագրության ոչ ճիշտ լինելու հարցում Հ. Օրբելին, որպես ամենածանրակշիռ փաստարկ, առաջ է քաշում նրանում թվանշան արտահայտող տառերի վրա գրվող համապատասխան պատիվների բացակայության հանգամանքը։ Սա ուղղակի վրիպում է և ուրիշ ոչինչ, որովհետև տեղում մեր կատարած հուշարձանի զննումները և արձանագրության լուսանկարի վրա պարզ երևացող հիշյալ թվանշանների վերևում և ներքևում փորագրված համապատասխան պատիվները այդ տեսակետի լավագույն հերքումն են։ Մեր կարծիքով Հ. Օրբելու այդ վրիպումն առաջացել է Գ. Հովսեփյանի արձանագրության վերծանության հրատարակության մեջ այդ պատիվները չնշելու հետևանքով, որը ստուգելու հնարավորություն Հ. Օրբելին չի էլ ունեցել։

---

9 Կ. Ղաֆադարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան, 1939, էջ 86։

10 И. А. Орбели, Избранные труды, стр. 408, 411—412.

11 Г. Н. Чубинашвили, Разыскания..., стр. 116.

12 И. А. Орбели, Избранные труды, стр. 393.

13 Նույն տեղում, էջ 395։

14 Նույն տեղում, էջ 397։

15 Նույն տեղում, էջ 401։

16 «Հիմնարկել»-ը այդ իմաստով էլ օգտագործվել է Գոմուրի և Ալայազի հուշարձանների վիմական արձանագրություններում. տե՛ս Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, Երևան, 3-րդ հ., 1967, էջ 108, 193։

17 И. А. Орбели, Избранные труды, стр. 397, 401.

3. Արուճի տաճարի հիշյալ արձանագրությունը XI դ. թվագրելու պատճառներից մեկն էլ համարվել է նրա գրչի անգրագիտությունը և որպես փաստարկ մեջ է բերվում նրա 9-րդ տողում փորագրված «Հայիոց» բառաձևը, փոխանակ «Հայոց»-ի։

Հ. Օրբելին ենթադրում է, որ արձանագրության գրիչը «Հայոց» բառի «հայ»-ը փորագրելուց հետո սկսում է փորագրել «իշխան» բառի «ի» տառը, բայց անմիջապես հետո զգալով իր սխալը՝ «ի»-ից հետո ավելացնում է «ոց» և ստանում այժմյան «Հայիոց» բարբառային ձևը։

Հարգելի գիտնականը չի ընդունում, որ «Հայիոց»-ը բարբառային արտահայտության ձև է։ Սակայն պետք է կարծել, որ «հայիոց»-ը, եթե իրոք բարբառային արտահայտություն չէ, ապա լոկ գրչի միամիտ վրիպում է և ճիշտ չի լինի դրանից այդպիսի ծանրակշիռ եզրահանգումներ կատարել, քանի որ հեղինակին ևս հայտնի են VII և այլ դարերի մեր գրիչների թույլ տված նման սխալները, որոնց մասին հաճախ խոսում է և ինքը[18]։

Բացի այդ, գրաբար լեզվից ամեն մի շեղում անպայման վրիպակ կամ սխալ չէ։ Այդ իմաստով ճիշտ են այն գիտնականները (Կ. Ղաֆադարյան, Ս. Բարխուդարյան), որոնք հայ վիմագրության մեջ երբեմն հանդիպող «վրիպակ» կամ «սխալ» թվացող շատ բառեր համարում են ժամանակի, լեզվի և բարբառի արտահայտություններ։

Հռիփսիմեի տաճարում օրինակ՝ VII դ. (618) գեղագիր արձանագրության գրիչը առաջին տողի վերջում «սրբոյ» բառի «սր» փորագրելուց հետո սկսել է փորագրել «բ» տառը, բայց այնուհետև նրա ուղղահայաց ստեղը փորագրելուց հետո թողնում է այն կիսատ և «բ»-ն տեղափոխում երկրորդ տողի սկզբին[19]։

Գեղամա լեռներում գտնվող VII դ. կոթողներից մեկի արձանագրության մեջ[20] մեկ այլ գրիչ երկու տառ է բաց թողնում և միայն արձանագրությունը փորագրել-ավարտելուց հետո նկատելով դա, համապատասխան տառեր ավելացնում այդ բառերի վերևում։

Դեռ ավելին, Հռիփսիմեի տաճարի VII դ. երկու արձանագրություններում «Հռիփսիմէ» անձնանունը գրված է մի դեպքում «Հռիփսիմե», մյուս դեպքում «Հռիւփսիմէ»[21]։ Եվ կամ Բագարանի 631 թ. միևնույն արձանագրության մեջ «Բոստ» անձնանունը մի դեպքում գրված է «Բուտ», մյուս դեպքում «Բոտ»[22]։ Եվ ոչ ոք դրա համար արձանագրությունը չի համարում ավելի ուշ շրջանի գրվածք։

4. Արուճի տաճարի արձանագրության չորրորդ անճշտությունը Հ. Օրբելին համարել է նրա թվագրության մեջ գոյություն ունեցող երկու տարվա տարբերությունը։ Այս հարցում Հ. Օրբելին իրավացի է այնքանով, որքանով նրանում նշված «Ի եւ (Թ) ամի Կոնստանտնի» հատվածը ցույց է տալիս, որ տաճարը կառուցված պետք է լիներ Կոնստանտ-Կոնստանտնի թագավորության 29-րդ տարում, այնինչ նա իրոք, որ թագավորել է միայն 27 տարի (641—668 թթ.)[23]։

Պետք է նշել, որ այստեղ գրչի սխալն ակնհայտ է, որի համար էլ նա «Ի եւ Թ ամի» թվանշանի «Թ»-ն առել է փակագծի մեջ(Թ), որը բավականին պարզ նկատվում է տեղում և լուսանկարում։ Որքան էլ տարօրինակ թվա, այդպիսով արձանագրության գրիչն իր սխալն ուղղել է։

Հարկավ սխալ է, «Ի» և «Թ»(=29) թվանշանի (Թ) (=9) միավորը, որը, հավանաբար, պետք է լիներ «Ի» և «Դ» (=24) և առաջացած լիներ «Դ» և «Թ» տառերի հնչյունային և կամ ինչպես Հ. Օրբելին է ենթադրում՝ հինգ և ինը թվերի շփոթությունից[24]։ Այստեղ մեկ կամ երկու տարվա տարբերությունն առանձնապես էական ղեր չի կարող խաղալ, քանի որ մեր պատմիչների

---

18 И. А. Орбели, Избранные труды, стр. 391, 393, 407, 408 и т. д.

19 И. А. Орбели, Избранные труды, стр. 407. Հեղինակը առաջին տողի վերջում «սր» դարձրել է «սը», կարծելով, որ պետք է լինի «սրբ» և ապա «բոյ», այնինչ «սր» է, իսկ երկրորդ տողի սկզբում «բոյ»—«սրբոյ»։ «Նողակաթ», էջ 172, տախտակ Բ, լուսանկար 3։

20 Իրավացի չէ Մ. Ռոստովցևը, երբ արձանագրությունը թվագրում է X դ.։ Տե՛ս М. Ростовцев. Апаранская греческая надпись царя Тиридата, Анийская серия, № 6 СПб., 1911, стр. 30. Այդ տեսակետի քննադատությունը տե՛ս մեր А. Н. Шагинян, Армянские хачары (крестные камни) и их надписи (IX—XIII вв.)—Автореферат, Ереван. 1970, стр. 6—7.

21 И. А. Орбели, Избранные труды, стр. 407, 408.

22 Նույն տեղում, էջ 391, 393.

23 Հ. Մանանդյան, Հանրագիտական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 390։

24 И. А. Орбели, Избранные труды, стр. 423.

և հատկապես Կ. Գանձակեցու վկայությամբ տաճարը կառուցվել է Անաստասի կաթողիկոսության 5-րդ տարում, այսինքն 665/666 թթ.[25]։

Միջնադարյան հայերեն վիմական արձանագրություններում գրիչների նման սխալ թվագրություն, այն էլ ոչ թե մի քանի, այլ 30 և ավելի տարիների տարբերությամբ փաստերի հանդիպում ենք նաև այլուր։ Այսպես, օրինակ, Կեչառիսի XI դ. Գրիգորաշեն տաճարի շինարարական արձանագրության մեջ գրիչը սխալվել է ամբողջ 30 տարով և փոխանակ այն թվագրելու ՆԾԲ (=1003) փոխարերել է ՆՁԲ (=1033), որն ակնհայտ սխալ է[26]։

Ինչպես հայտնի է, Զաքարյան Սարգիս ամիրսպասալարը մահացել ու թաղվել է Սանահնի վանքում՝ 1187 թ., բայց Հռոմայրի 1188 թ. մի արձանագրության մեջ նա դեռևս ողջ է համարվել[27], եվ կամ, նույն այդ Սարգսի ավագ որդին՝ զորահրամանատար՝ Զաքարե Շահնշահը, որը նույնպես թաղվել է Սանահնի վանքում 121228 թ.՝ Խծկոնքի 1213 թ. մեկ այլ արձանագրության մեջ կենդանի է համարվել։

Ավելի չընդարձակվելու համար նշենք, որ Արուճի նույն այդ տաճարի հարավային պատին Սմբատ Շահնշահի անունից գրված X դարի արտոնագիր-արձանագրության գրիչը այն թվագրել է «ՆՁ» և ապա զղալով իր այդ սխալը՝ դրա կողքին փորագրում է արդեն ճիշտ՝ ՆԼԶ նոր թվականը, առանց ջնջելու նախկինը։ «Ցանուն Ա(ստուծ)յի ՆԶ թուական, ՆԼԶ (—987) ես Սմբատ Շահնշահ...»[28]։

Այս և նման բազմաթիվ օրինակները ցույց են տալիս, որ միջնադարյան մի շարք գրիչներ (և ինչո՞ւ միայն մեր...) արձանագրություններ փորագրելիս երբեմն թույլ են տվել ինչպես տեքստաբանական, լեզվական, ուղղագրական, այնպես էլ թվագրական անճշտություններ ու վրիպումներ՝ ոչ միշտ նկատելով և ուղղելով դրանք։

Արուճի տաճարը ենթարկվել է մասնակի փոքր վերանորոգման, որի մասին հիշատակված է Հուշարձանի հյուսիսային պատին հետագայում ագուցված մի փոքրիկ և անշուք խաչքարի արձանագրության մեջ[30]։ Ուշագրավ է, որ Հուշարձանի վերանորոգման այս արձանագրությունը իր հնագրությամբ զգալապես տարբերվում է նրա հիմնադրման շինարարության արձանագրությունից և հատուկ է իր դարի գրչության, հետևաբար, այստեղ ոչ մի խոսք չի կարող լինել տաճարը X դ. վերագրելու և կամ հիմնովին վերանորոգված լինելու մասին։ Հուշարձանի հիմնական պատերի շարումը եզրակոսներով (фаски) մշակված քարերով՝ դրա ապացույցներից մեկն է, որը հատուկ է V—VII դդ. հայկական հուշարձաններին և VII դ. հետո այլևս չի հանդիպում։ Չի կարելի անտեսել նաև հուշարձանի կղմինդրե ծածկի մասին, որը նույնպես հատուկ է V—VII դդ. մեր հուշարձաններին։

Այսպիսով, ելնելով Արուճի շինարարական արձանագրության գրչության, հնագրության և լեզվական առանձնահատկություններից՝ կարծում ենք, որ այն միանգամայն համապատասխանում է VII դ. հայերեն վիմագրության ոճին ու ոգուն։ Այստեղից էլ իրավացի են նրանք, ովքեր ընդունում են, որ Արուճի տաճարը և նրա արձանագրությունը VII դարի 60-ական թվականների գործեր են։

Արուճի տաճարի շինարարությունը կատարվել է բավականին արագ (մոտավորապես 4—5 տարվա ընթացքում), VII դ. արաբների նշանակած Հայաստանի կառավարիչ Գրիգոր Մամիկոնյանի և նրա ամուսին Հեղինեի կողմից, Կոստանտ II (Հերակլի թոռ) կայսեր իշխանության (641—668) 24-րդ տարում, այսինքն 665/666 թ. և Անաստաս Ակոռեցու կաթողիկոսության 5-րդ տարում՝ դարձյալ 665/666 թ.։

Արուճի տաճարի վերը նշված արձանագրության մեջ հիշատակված Բյուզանդիայի Կոստանտ II կայսրն ու Հայաստանի կառավարիչ Գրիգոր Մամիկոնյանը (ամուսինը Հեղինե) այլ համանուն

---

25 Կիրակոսի Գանձակեցւոյ Պատմութիւն Հայոց, Թրիլիսի, 1912, էջ 60։

26 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն երկրորդ, Երուսաղեմ, 1942, էջ 6։

27 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 179։

28 Կիրակոսի Գանձակեցւոյ Պատմութիւն հայոց, էջ 175։

29 Բերում ենք մեր հավաքածուից։

30 Հ. Եղիազարյան, Գրիգոր Մամիկոնյան իշխանի կառուցած տաճարը և պալատը Թալիշ գյուղում և վերջինիս հնագիտական պեղումները, «Էջմիածին», № 2, 1955, էջ 37։ Այդ վերանորոգումը ամենայն հավանականությամբ վերաբերում է հուշարձանի ծածկի և պատերի վերևի առանձին մասերին, որոնք կարող էին տուժած լինել X դ. տեղի ունեցած երկրաշարժից։

անձնավորությունների հետ նույնացնելու փորձերը հիմնավոր չեն, որովհետև Հայաստանում չի եղել մեկ այլ Գրիգոր Մամիկոնյան՝ կինը Հեղինե[31], եվ ներկայիս տաճարն էլ նույն ինքը՝ Հայաստանի կառավարիչ՝ Գրիգոր Մամիկոնյանի կառուցածն է։

Այստեղ ավելորդ չենք համարում մեջ բերելու Հ. Օրբելու մի վրիպումը ևս, որը վերաբերում է Արուճի հիշյալ վիմագրությանը։ Նա մի պահ շփոթելով այն, որ Ներսես Տայեցուց (641—661) հետո Անաստասն է բարձրանում Հայաստանի կաթողիկոսության գահի վրա և ոչ թե Իսրայելը, գրում է.

«Արուճի արձանագրության թվագրության մութ հարցը, ավելի ևս մթագնվում է Վարդանի և Կիրակոսի մեջբերումներով, որոնք վկայում են Արուճի տաճարի շինարարությունը Անաստասի կաթողիկոսության շրջանում, Կիրակոսի խոսքերով ասած՝ նրա հովվության 5-րդ տարում։ Ի միջի այլոց արդեն 667/8 թ. Հայաստանի կաթողիկոսն էր Իսրայելը։ Զգիտեմ ինչու, Մեսրոպ արքեպիսկոպոսը Իսրայելի մահը վերագրում է 671 թ.։ Իսրայելի կաթողիկոսության սկիզբը նա իրավացի կերպով համարում է 661 թ. (ավելի ճիշտը կլինի 661/2 թ.), և եթե նկատի ունենանք այն, որ Իսրայելի հովվությունը տևել է 6 տարի, հետևաբար նրա մահը համընկնում է 667/668 թ.»[32]։

Այնուհետև անվանի գիտնականը զգալով այդ վրիպումը՝ Վ. Թալինի VII դարի Աստվածածին տաճարի շինարարական արձանագրության առթիվ իր հետագայում գրած աշխատության մեջ պատշաճ կերպով ուղղում է այն[33]։

Արուճի տաճարը հայկական միջնադարյան ճարտարապետության ամենահոյակապ «Գմբեթակիր սրահ» (kuppenhalle) հուշարձաններից մեկն է, հնագույններից մեկն ամբողջ Անդրկովկասում։ Այն կառուցված է VII դ. Հայաստանի կառավարիչ Գրիգոր Մամիկոնյանի և նրա ամուսին Հեղինեի կողմից 665/666 թթ.։ Ուշագրավ է, որ հուշարձանը հենց սկզբից էլ կոչվել է «Կաթողիկե»։ Վերջինս բացի գլխավոր կամ մայր տաճարի իմաստից, ունեցել է նաև «Գմբեթակիր» հուշարձանի իմաստ։

ПО ПОВОДУ РАСШИФРОВКИ СТРОИТЕЛЬНОЙ НАДПИСИ АРУЧСКОГО КАФЕДРАЛЬНОГО СОБОРА VII ВЕКА

А. Н. ШАГИНЯН

Резюме

В статье рассматривается датировка строительной надписи Аручского храма, давно ставшей предметом споров. Автор путем разбора содержащихся в надписи исторических сведений и особенно сравнительным анализом палеографических особенностей букв и изменения их форм в течение V—X вв. устанавливает, что надпись подлинная и датируется 60-ми годами (665—666) VII в.

---

31 Հեղինե իշխանուհին՝ Մեծ հայքի տիկինը, Աղվանքից էր և Գրիգոր Մամիկոնյանի՝ Հայաստանի կառավարչի ու զորավարի ամուսինը։ VII դարի 70—80-ական թվականներին Աղվանքի մեծ իշխան Վարազ-Տրդատը Իսրայել եպիսկոպոսին ուղարկում է այս Գրիգոր Մամիկոնյանի և նրա ամուսին Հեղինեի մոտ՝ ս. Գրիգորի մասունքից մի կտոր տանելու Աղվանք, Հայաստանի կաթողիկոս Սահակի օրոք։ Տե՛ս՝ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 153, 183, 184։

32 И. А. Орбели, Избранные труды, стр. 404.

33 Նույն տեղում, էջ 437։ Գ. Ջուրինաշվիլին Արուճի տաճարի կառուցումը վերագրում է X դ. վերջերին, հենվելով նաև Հ. Օրբելու այս և վերոհիշյալ նման վրիպումների վրա (տե՛ս Г. Н. Чубинашвили, Разыскания..., էջ 114—116)։